ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱԽՏԸ

Պատմ. գիտ. դոկտոր Մ. Վ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը նշանավորեց արմատական շրջադարձ պատմության մեջ, սահմանագիծ դրեց հին ու նոր աշխարհների միջև և դարձավ մարդկության պատմության նոր դարագլխի՝ կապիտալիզմի կործանման և կոմունիզմի հաղթանակի, բոլոր ժողովուրդների ազատ ու երջանիկ կյանքի ստեղծման դարագլխի սկիզբը։ Ահա թե ինչու ոչ միայն սովետական ժողովուրդը, սոցիալիստական բոլոր երկրները, այլև բովանդակ աշխարհի առաջադեմ մարդկությունը անհուն սիրով ու ոգևորությամբ են նշում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-ամյակը։

Մեր լայնածավալ երկրի բոլոր ժողովուրդները քաղաքական վերելքով ու աշխատանքային սխրագործություններով են դիմավորում այդ մեծագույն տարեթիվը։ Նրանք կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ պայքարում են ՍՄԿԿ XXV համագումարի որոշումների կենսագործման համար։ Հոկտեմբերյան հեղափոխության 60-ամյա բարձունքից կուսակցությունը, սովետական ժողովուրդն իմաստավորում են անցած ուղին, որպեսզի ավելի հաջողությամբ լուծեն նոր խնդիրները։ Միաժամանակ այդ հեղափոխության սկսած գործն ընդլայնվում, ամրապնդվում ու հաղթանակում է ամբողջ աշխարհում։ Սոցիալիզմը հարյուր միլիոնավոր մարդկանց այսօրն է և համայն մարդկության վաղը։ ՍՄԿԿ Կենտկոմի 1977 թ. հունվարի 31-ի որոշման մեջ շեշտվում է. «Հոկտեմբերի հաղթանակը XX դարի գլխավոր իրադարձությունն է, որն արմատապես փոխեց ամբողջ մարդկության զարգացման ընթացքը»։

* * *

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը բախտորոշ նշանակություն ունեցավ մեր լայնածավալ երկրի բոլոր ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի կյանքում։ Նրանք թոթափեցին ճնշման ու կեղեքման դաժան լուծը, ձեռք բերեցին սոցիալական ու ազգային ազատություն և դուրս եկան աննախընթաց զարգացման լայն ուղին։

Ամեն մի ժողովրդի պատմական բախտը պայմանավորված է նրա կյանքի ներքին ու արտաքին պայմանների ամբողջությամբ։ Հայ ժողովրդի պատմական բախտը, նրա կյանքի ուղին ձևավորվել է Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացմամբ, ներքին ու արտաքին թշնամիների դեմ մղված դարավոր պայքարով։ Անշուշտ, այդ ուղին եղել է ծանր ու դժվարին, բայց և հերոսական ու արգասավոր։ Մեր հինավուրց ժողովուրդը տեսել է անհամար դժվարություններ, ենթարկվել դաժան արհավիրքների, տվել բազմաքանակ զոհեր, կրել մեծամեծ զրկանքներ։ XX դարի

սկզբին նա կանգնած էր ֆիզիկական բնաջնջման ահավոր վտանգի առաջ։ Դրությունն արմատապես փոխվեց, երբ պատմական «Ավրորայի» աշխարհացունց համազարկերն ազդարարեցին մարդկության նոր դարագլխի սկիզբը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը հիմնովին փոխեց ռուսական նախկին կայսրության բոլոր ժողովուրդների, այդ թվում հայերի վիճակը։ Սովետական իշխանության հաստատմամբ հայ ժողովուրդը փրկվեց անէացումից և բռնեց ազատ ու երջանիկ կյանքի ստեղծման ուղին։ Նա, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում և կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, պատմական կարճ ժամանակամիջոցում հասավ տնտեսության ու մշակույթի աննախընթաց վերելքի՝ սոցիալիզմի հաղթանակին ու հաստատակամորեն գնում է կոմունիզմի կառուցման ուղիով։ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լեոնիդ Իլյիչ Բրեժնևը, Սովետական Հայաստանի 50-ամյակի առթիվ արտասանած ճառում, արդարացիորեն ասաց. «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը, Հայաստանում սովետական իշխանության հաղթանակը հայ ժողովրդին բերեցին իսկական սոցիալական ու ազգային ազատագրություն, արմատական շրջադարձ նշանավորեցին նրա ճակատագրում»[1]։

Հիրավի, մեծ Հոկտեմբերը արմատական բեկում առաջացրեց հայ ժողովրդի պատմական ճակատագրում։ Դա է՛լ ավելի ակնբախ կդառնա, եթե վերհիշենք հատկապես նրա դառն անցյալը, մի քննական հայացք ձգենք հայ ժողովրդի պատմության վրա։

Հայ ժողովուրդը պատկանում է աշխարհի հնագույն կուլտուրական ժողովուրդների թվին։ Նա ապրել է բոլոր հասարակական-տնտեսական ֆորմացիաները և զարգացել բովանդակ մարդկությանը հատուկ ընդհանուր օրինաչափություններով։ Նրա համար էլ առաջնային եղել է տնտեսական բազիսը, որն ամեն անգամ ունեցել է համապատասխան վերնաշենք, նրա կյանքի առանցքն է կազմել սոցիալական պրոբլեմը և այլն։

Այդուհանդերձ հայոց պատմությունն ունեցել է նաև իր առանձնահատկությունները։ Դրանցից մեկն այն է, որ նա համակված է օտարերկրյա նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած անձնվեր ու հերոսական պայքարով։ Չէ՞ որ Հայաստանը գտնվում էր Եվրոպայի ու Ասիայի հատման կետում, նրա վրայով էին անցնում համաշխարհային առևտրի կարևոր ուղիները։ Նա տնտեսական կապերի ու հաղորդակցության ճանապարհների խաչմերուկ էր։ Խոշոր պետությունները (Ասորեստան, Պարսկաստան, Հռոմեական կայսրություն, Բյուզանդիա և այլն) դեռ վաղ ժամանակներից հասկացան Հայաստանի ռազմա-ստրատեգիական դիրքի մեծ նշանակությունը և կատաղի պայքար մղեցին նրան տիրանալու համար։ Ապա եկան արաբները, սելջուկները, մոնղոլները, թուրքերը։ Կարծես թե վերջ չկար ավերիչ պատերազմներին. ժողովուրդը կոտորվում էր, իսկ նրա ստեղծած նյութական ու մշակութային բարիքները հափշտակվում կամ ոչնչացվում էին։ Ի՞նչ էր մնում անել հայ ժողովրդին, եթե ոչ կենաց ու մահու պայքար մղել անհամար թշնամիների դեմ, ամեն անգամ վերանորոգել ավերված երկիրը, քայքայված տնտեսությունը, արյունով պահպանել ու զարգացնել իր հոգևոր մշակույթը։

---

[1] Լ. Ի. Բրեժնև, Սովետական Հայաստանի 50 տարին, Երևան, 1970, էջ 10—11։

Այդպիսի բարդ իրադրության մեջ խիստ կարևոր նշանակություն էր ստանում կողմնորոշման (օրիենտացիայի) հարցը։ Հայաստանը գտնվել է պատմության քառուղիներում, հայ ժողովուրդն ապրել է ավելի հզոր հարևանների առկայությամբ, ենթարկվել օտար բռնակալների արշավանքներին և իր գոյությունը պահպանելու համար դիմել է ոչ միայն անձնուրաց պայքարի, այլև որևէ ուժեղ պետության օգնության։ Իհարկե, պետք է տարբերություն դնել տվյալ երկրի ժողովրդի և նրա առանձին գործիչների կողմնորոշման միջև, որոնք միշտ չէ, որ նույնն են և ունեն տարբեր պատճառներ ու շարժառիթներ։ Միաժամանակ, կամավոր կողմնորոշումը չի կարելի շփոթել հարկադրականի հետ։ Բոլոր դեպքերում քաղաքական օրիենտացիան ունի դասակարգային բովանդակություն, այն միասնական չէ շահագործողների ու շահագործվողների համար, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սեփական շահերն ու նպատակները և համապատասխանաբար էլ կողմնորոշվում է դեպի իրեն հարազատ ուժերը։ Իհարկե, ամեն մի ժողովրդի արմատական շահերը ինչպես բոլոր հարցերում, այնպես էլ օրիենտացիայի խնդրում կարող են արտահայտել միայն նրա մեծամասնությունը կազմող աշխատավոր մասսաները, նրանց տրամադրություններն արտահայտող առաջադեմ գործիչները։

Խոսելով մեր ժողովրդի մասին, կարող ենք ասել, որ նա թեև համարյա մշտապես գտնվել է օտար բռնակալությունների բախումների թատերաբեմում կամ նրանց ճնշման տակ, երբեք չի կորցրել իր ոգու արիությունը, ապավինել է սեփական ուժերին, հերոսաբար մարտնչել և նույնիսկ անթիվ զոհեր տվել, բայց երբեք չի կողմնորոշվել դեպի այդ բռնակալությունները, թեպետև ժամանակ առ ժամանակ դիմել է իր հզոր հարևանների օգնությանը։ Իր դարավոր պատմության ընթացքում նա ունեցել է միայն մեկ ու ճշմարիտ կողմնորոշում՝ ռուսական, որը վերահնեց հեղափոխական ուղու և նրան բերեց ազատություն ու բարգավաճում։

Անշուշտ, դա չի բացառել, որ իր երկարամյա ուղու վրա հայ ժողովուրդը օգտագործեր մեծ պետությունների, ուժեղ հարևանների հակասությունները, իր ազատագրական շարժման հզորացման համար անուղղակի հնարավորություններ ևս որոներ, երբեմն էլ «կարծեցյալ օրիենտացիայով» պահպաներ իր գոյությունը, պայքարելով «սպասեր» լավագույն ժամանակներին։

Այդ բոլորով հանդերձ գործը չի կարելի ներկայացնել այնպես, որ իբր հայ աշխատավորը կեղեքվում էր միայն օտար նվաճողի կողմից։ Ամենևին. Հայաստանի բնակչության մեջ էլ կար դասակարգային շերտավորում, կային շահագործողներ ու շահագործվողներ։ Հայ աշխատավորը հարստահարվում էր նաև սեփական ճնշողների կողմից, որոնց վրա հենվում էին օտար նվաճողները։ Այստեղից հասկանալի է, որ հայ իրականությունը չէր կարող լինել մի ինչ-որ միասնական ամբողջություն և այնտեղ էլ առկա էին սոցիալական հակասություններ ու դասակարգային պայքար։

Ընդհանուր առմամբ ծանր մաքառումների և հերոսամարտերի գնով հայ ժողովուրդը ոչ միայն որոշ ընդհատումներով պահպանեց իր պետականությունը մինչև XIV դարը, այլև ստեղծեց իր ժամանակի համար հարուստ մշակույթ, որն աչքի է ընկնում և՛ ինքնատիպությամբ, և՛ համամարդկային ընդգրկումով։ Խորապես ճիշտ էր Վ. Յա. Բրյուսովը, երբ գրում էր. «Հայերի ճակատագրի մեջ դրված է համընդհանուր պատմության առավել նշանավոր էջերից մեկը, որը նոր ձևով է լուսավորում գիտության մի շարք հարցեր...

Հայաստանի պատմությունն արժանի է նույնպիսի ուշադրության, ինչպիսին ամենանշանավոր ժողովուրդների պատմությունը, չբացառելով ո՛չ եգիպտացիներին, ո՛չ հույներին, ո՛չ հռոմեացիներին, ո՛չ ժամանակակից Եվրոպայի ժողովուրդներին, որոնք իրենց ինքնուրույն ավանդն են մուծել մարդկության կուլտուրայի մեջ»[2]։

Միջին դարերի մեծագույն արհավիրքներից մեկն էր օսմանյան թուրքերի ներխուժումը Փոքր Ասիա և «Կարահիսարի ավազակային պետության ստեղծումը»[3]։ Հայաստանի վրա թուրքերի ավերիչ հարձակումով սկսվեց հայ ժողովրդի պատմության ամենամռայլ ժամանակաշրջանը։ XVI դարում Հայաստանը բաժանվեց սուլթանական Թուրքիայի ու շահական Պարսկաստանի միջև, որոնց արյունոտ լծի տակ կեղեքվում ու ծվատվում էր հայ ժողովուրդը։

Հայ ժողովրդի պատմության բնորոշ կողմերից է նաև այն, որ դառն ճակատագրի հետևանքով դեռ վաղ ժամանակներից իր երկրից տեղահանված հայությունը գաղթօջախներ ստեղծեց աշխարհի տարբեր երկրներում։ Այդ գաղթօջախները դարձան հայ մշակույթի և ազգային-ազատագրական շարժման կենտրոններ։ Դա հատկապես ակներև էր թուրք-պարսկական տիրապետության ժամանակ, երբ Հայաստանը երկատված էր և անողոքաբար ճնշվում էր ամեն մի ազատագրական ելույթ, խեղդվում անկախության ամեն մի կանչ։ Մյուս կողմից՝ գաղթօջախները եվրոպական ու ասիական մի շարք երկրներում կրում էին ժամանակի առաջադեմ գաղափարների ազդեցությունը և համապատասխանորեն անդրադարձնում Հայաստանի վերաբերյալ։ Վերջապես, պետք է հիշել, որ ընդհանուր առմամբ այդ ամենը համընկնում էր բուրժուական հարաբերությունների ձևավորման ու զարգացման հետ, և գաղութահայ բուրժուազիան, օտարից նեղվելուց ու սեփական «երկիր» ունենալու մտայնությամբ, ավելի եռանդուն կերպով էր ձեռնամուխ լինում Հայաստանը թուրք-պարսկական ռազմա-ֆեոդալական իշխանությունից ազատագրելու գործին։ Առջևից գնում էին ժամանակի առաջադեմ գործիչները։

Թուրք-պարսկական սպանիչ տիրապետությունը հույժ կարևոր դարձրեց հայ ժողովրդի ազատագրական պայքարի կողմնորոշման հարցը։ Օտարերկրյա դարավոր լուծը ջլատել էր հայ ժողովրդի ուժերը և նա միայնակ չէր կարող հաղթանակի հասնել երկու բռնակալությունների դեմ։ Բացի սեփական ուժերից, հարկավոր էր ապավինել նաև մի այլ՝ դրսի գործոնի վրա, որը մոտ լիներ նրան։ Հենց այդպիսին դարձավ Ռուսաստանը, և XVIII դարում արդեն շատ որոշակի էր հայերի ռուսական օրիենտացիան։ Այն ելնում էր թուրք-պարսկական անարգ լծից ազատագրվելու անհրաժեշտությունից և հայկական պետականություն ստեղծելու ակնկալությունից։ Ցարիզմը, իհարկե, ձգտում էր պարզապես Հայաստանը միացնել ռուսական կայսրությանը և ենթարկել գաղութային ճնշման, ամրապնդել իր ռազմա-ստրատեգիական դիրքերը Անդրկովկասում ու Մերձավոր Արևելքի մատույցներում։ Այնուամենայնիվ, անկախ ցարիզմի զավթողական նպատակներից, Անդրկովկասի միացումը Ռուսաստանին առաջադիմական խոշոր իրադարձություն էր։ Ընդհանրապես, «Ռուսաստանը իսկապես պրոգրեսիվ դեր էր կատարում Արևելքի նկատմամբ»[4]

---

[2] В. Я. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, Ереван, 1940, էջ 1—2։

[3] Архив К. Маркса и Ф. Энгельса, т. 5, էջ 223։

[4] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, II изд., т. 27, էջ 24։

և բազմաթիվ ժողովուրդներ, այդ թվում հայերը, «մեծ համակրանք ունեին դեպի ռուսները» և «Ռուսաստանի մեջ տեսնում էին իրենց միակ հենարանը, իրենց ազատագրողին»[5]։

1828 թ. հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցավ մեծագույն իրադարձություն. դա Արևելյան Հայաստանի միացումն էր Ռուսաստանին, որով հայ ժողովուրդը մտավ տնտեսապես ու կուլտուրապես ավելի զարգացած պետության կազմի մեջ, իր բախտը մեկընդմիշտ կապեց ռուս մեծ ժողովրդի հետ ու կանխորոշեց իր լուսավոր գալիքը։ Արտահայտելով ժողովրդական հոծ զանգվածների նվիրական զգացումները, մեծ հայրենասեր, դեմոկրատ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը գրել է. «Սրինվի էն սիաքը, որ ոսի օրինած ոտմը հայոց լիս աշխարհը մտավ ու զզլբաշի չար շունչը մեր երկրիցը հալածեց»։ Ականավոր գրողի այս խոսքերը նոր ուժով են հնչում այժմ, երբ հայ ժողովուրդը նախապատրաստվում է հանդիսավորությամբ նշելու Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու 150-ամյակը։

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին այն ժամանակ չբերեց իսկական ազատություն։ Հայ ժողովուրդը, ինչպես և Ռուսաստանի մյուս ժողովուրդները, ապրում էին ցարական միահեծանության պայմաններում և ենթարկվում ճնշման ու շահագործման։ Բայց շատ ավելի ծանր էր ու անտանելի թուրքական բռնակալության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի դրությունը։

Ընդհանուր առմամբ, եթե ցարական Ռուսաստանը ժողովուրդների բանտ էր, ապա սուլթանական Թուրքիան դարձել էր մարդկային սպանդանոց։ Այդ մարդախողխող պետության մեջ հայ ժողովուրդը ենթարկվում էր գենոցիդի քաղաքականության։ Այն իր գագաթնակետին հասավ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ թուրքական բռնակալները՝ գերմանական ռազմամոլների անմիջական աջակցությամբ և ընդհանրապես միջազգային իմպերիալիզմի «թողտվության» պայմաններում, բնաջնջեցին արևմտահայության հիմնական մասը (շուրջ մեկուկես միլիոն մարդ), իսկ նրա մազապուրծ բեկորները ցրվեցին աշխարհով մեկ։ Միանգամայն գոհ այդ արյունախում քաղաքականության արդյունքներից, գաղանաբարո Թալաաթ փաշան ցինիկաբար հայտարարեց. «Հայկական հարցը լուծելու տեսակետից ես երեք ամսում ավելի շատ գործ կատարեցի, քան Աբդուլ-Համիդը երեսուն տարում»։

Թուրքերի կողմից հայ ժողովրդի մասսայական բնաջնջումը և երկրի հրոսակային ամայացումը առաջ բերեցին մարդկության բոլոր լուսավոր դեմքերի բողոքն ու ցասումը։ Ականավոր լենինյաններ Ս. Շահումյանը և Ս. Կիրովը, սրտի անհուն կսկիծով ու մահացու ատելությամբ դատապարտեցին հայ ժողովրդի նկատմամբ կիրառված հրեշավոր ոճրագործությունը՝ «դանթեական դժոխքը»։ Բոցաշունչ հեղափոխական Կ. Լիբկնեխտը ռայխստագում կատարած իր մեղադրական հարցապնդումով անարգանքի սյունին գամեց թուրքական բարբարոսներին ու նրանց գերմանական հովանավորներին, որոնք իրենց ձեռքերը թաթախել էին հայերի արյան մեջ։ Ֆրանսիական աշխարհահռչակ գրող Անատոլ Ֆրանսն ընդգծեց, որ տանջահար հայ ժողովրդի, նրա հանճարի կողմն է բոլոր ազնիվ սրտերի ու մտքերի համակրանքը, իսկ ռուս ականավոր

5 Նույն տեղում, հատ. 9, էջ 32։

գրող ու գիտնական Վ. Յա. Բրյուսովը հաստատ համոզմունք հայտնեց, որ գոհարազարդ մշակույթ ունեցող հայ ժողովուրդը չի կարող մեծ ապագա չունենալ։

Արևմտահայության բռնագաղթն ու կոտորածը պատմության մեջ եղած մեծագույն ոճիրներից մեկն է։ Հայ ժողովուրդն այդ օրհասական պահին էլ չկորցրեց հավատը, ապավինեց իր ուժերին ու մղեց հերոսական դոյամարտեր՝ Վանում և Շատախում, Սասունում ու Շապին-Կարահիսարում, Մուսա լեռան վրա և Ուրֆայում։ Նա ցույց տվեց, որ հակառակ բոլոր չարագործություններին ու աղետներին, ինքը դիմացել է դարերի ահեղ փորձությանը և այժմ էլ կարող է ու պետք է ապրի։

* * *

Ժողովուրդների ազատագրման ու բարգավաճման միակ ճիշտ ուղին ցույց տվեց մարքսիզմ-լենինիզմը։ Դա հեղափոխական պայքարով սոցիալական ու ազգային ազատության ձեռք բերումն է։ Առանց շահագործման ու ճնշման վերացման չի կարող արմատականորեն լուծվել ազգային հարցը։

Մարքսիզմի հանդես գալուց հետո լուսավորվեց նաև հայ ժողովրդի ազատագրման ուղին։ Այստեղ խոսքը վերաբերում է ոչ միայն գիտական կոմունիզմի ընդհանուր ճշմարտություններին, որոնք, հասկանալի է, լիովին կիրառելի են բոլոր ժողովուրդների համար, այլև նրան, որ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը տարբեր առիթներով անդրադարձել են Հայաստանին ու իրենց մտքերն արտահայտել նրա ազատագրման վերաբերյալ։ Այդ տեսակետից առավել կարևորը Ֆ. Էնգելսի 1894 թ. նոյեմբերի 23-ի պատասխանն է «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» գրքի հայերեն թարգմանիչ Հովսեփ Աթաբեկյանցի նամակին։ Էնգելսը նշում էր, որ ռուսական ցարիզմի խորտակումը կազատագրեր շատ ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդին։ Ըստ երևույթին Էնգելսը չէր տարակուսում, որ ռուսական ցարիզմի կործանումն իր հետ կբերի նաև թուրքական բռնակալության վերացում։ Ահա հենց այդ նկատառումներով է, որ Հայաստանի ազատագրումը նա կապում էր ռուսական ցարիզմի տապալման հետ։ Կյանքը հաստատեց այս կանխագուշակությունը. Ռուսաստանում ցարիզմի ու կապիտալիզմի կործանումը բերեց նաև հայ ժողովրդի սոցիալական ու ազգային ազատագրում, ընդ որում բնորոշ է, որ դա տարածվեց ոչ միայն ամբողջ արևելահայության, այլև մասամբ արևմտահայության վրա, թե՛ այն ժամանակվա գաղթականության գալով և թե՛ հետագայում սովետական իշխանության տարիներին կազմակերպված հայրենադարձությամբ։

Էնգելսից հետո բավականաչափ փոխվեց պատմական իրադրությունը։ Իմպերիալիզմի ձևավորման հետ միասին ուժգնորեն զարգացավ կապիտալիզմի անհամաչափ զարգացման օրենքը և փոխվեց սոցիալիստական հեղափոխության հաղթանակի օրինաչափությունը (հանդես եկավ մի երկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը), ծայրաստիճան սրվեցին հակասությունները մեծ տերությունների միջև ընդհանրապես և «թուրքական ժառանգության» շուրջը՝ մասնավորապես, իսկ «հիվանդ մարդը» դանդաղ պատճառներով, հատկապես գերմանական միլիտարիզմի օգնությամբ, ուշքի եկավ և միջազգային իմպերիալիզմի աջակցությամբ կատարեց հրեշավոր ոճրագործություն հայ ժողովրդի նկատմամբ։ Կասկածից վեր է, որ եթե այդ վճռական պահին

վրա չհասներ Հոկտեմբերյան հեղափոխությունն ու նրա հաղթական երթը չընդդրկեր Անդրկովկասը, ապա սրի կքաշվեր ամբողջ հայ ժողովուրդը։ Իրավամբ Սովետական Հայաստանը դարձավ մեծ Հոկտեմբերի դավակը։

Նոր պայմաններում Վ. Ի. Լենինը ամենայն կոնկրետությամբ նշեց, որ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայերի փրկությունը ցարիզմի ու կապիտալիզմի տապալման մեջ է։ Ուստի գլխավոր խնդիրն էր կազմակերպել այդ ժողովուրդների համատեղ հեղափոխական պայքարն ընդդեմ տիրող կարգերի։

Հայ ժողովրդի համար բախտորոշ էր հատկապես այն, որ նրա ռուսական կողմնորոշումը վերաճեց հեղափոխական ուղու և նա ինքն էլ մյուս ժողովուրդների հետ միասին ակտիվորեն մասնակցեց ցարիզմի ու կապիտալիզմի դեմ մղվող պայքարին։ Նրա լավագույն զավակները կանգնած էին ժամանակի առաջադեմ ու հեղափոխական մտքի ու գործի բարձր մակարդակին։ Այսպես, Մ. Նալբանդյանը և հետագայում հայ մարքսիստները, կոմունիստները կողմնորոշվում էին դեպի դեմոկրատական-հեղափոխական Ռուսաստանը և ոչ թե դեպի ցարական, կալվածատիրական-բուրժուական կարգերը կամ արևմտյան իմպերիալիստական պետությունները, ինչպես քարոզում էին հայ կղերա-ֆեոդալական ու բուրժուա-նացիոնալիստական գործիչները։

Մարքսիստական-կոմունիստական ուղղության դերը վճռական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի կյանքում։ Միայն նա ցույց տվեց բազմաչարչար ժողովրդի սոցիալական ազատագրման ու ազգային վերածննդի ճիշտ ուղին և ոչ միայն ցույց տվեց, այլև ապահովեց դրա իրականացումը։ Դա առավել ևս ընդգծվում է հայ իրականության մեջ գոյություն ունեցող բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների ու հոսանքների ազգակործան քաղաքականության ընդհանուր ֆոնի վրա։ Դրանք բոլորը, և հատկապես դաշնակցականները, իրենց հույսերը կապում էին արևմտյան տերությունների հետ, հավատում նրանց կեղծ խոստումներին և օդային դղյակներ կառուցում, վարում արկածախնդրական քաղաքականություն։ Իրականում իմպերիալիստները միայն իրենց շահագիտական նպատակներն էին հետապնդում և դաշնակցականներին օգտագործում որպես գործիք։

Բնականաբար, ցարիզմի դեմ մղվող հեղափոխական պայքարին անմիջականորեն կարող էին մասնակցել այն աշխատավոր հայերը, որոնք գտնվում էին Արևելյան Հայաստանում, Անդրկովկասում և Ռուսաստանում։ Հայ ժողովրդի լավագույն զավակները մտան կոմունիստական կուսակցության մեջ և գործեցին Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ։ Բոլշևիկները, պաշտպանելով հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը (օրինակ, 1903 թ. և այլն), ցույց էին տալիս, որ լիակատար ազատագրման երաշխիքը տիրող կարգերի տապալումն է և իսկական ժողովրդապետության հաստատումը։ Հայ ժողովուրդը համընթաց քայլեց Ռուսաստանի բոլոր ժողովուրդների հետ և ռուսական պրոլետարիատի գլխավորությամբ ակտիվորեն մասնակցեց երկրում ծավալված հեղափոխական շարժումներին։

Այդպիսին էր արևելահայության հեռանկարը, բայց հենց այդ պատճառով, նա իր բախտը կապել էր ռուս ժողովրդի հետ, կոմունիստական կուսակցության գործունեության հետ և կանգնել ազատագրության մեծ ուղու վրա, դրանով իսկ նա արտահայտում էր ամբողջ հայ ժողովրդի իղձերն ու նպատակները և հաստատակամորեն իր կողմը գրավում արևմտահայությանը։

որն իր հերթին բնականորեն հակված էր դեպի Ռուսաստան և այնտեղից էլ սպասում էր իր փրկությունը թուրքական բռնակալությունից։ Արևմտահայ խոշորագույն գրող ու հասարակական-քաղաքական գործիչ Գրիգոր Զոհրապն աներկմիտ ձևով ասում էր, որ «հայկական հարցում մեր գլխավոր հենարանը Ռուսաստանն է»[6]։ Նշենք նաև, որ բոլշևիկները բոլորովին էլ անտարբեր չեն եղել դեպի հայկական հարցը, ինչպես չարախոսում են դաշնակներն ու այլ զրպարտիչներ։ Ընդհակառակը, նրանք մոտիկից զբաղվել են այդ հարցով, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի ազատագրմամբ։ Վ. Ի. Լենինն ամենայն ուժով դատապարտել է թուրքական տեռորիստական ռեժիմը և մեծագույն համակրանքով խոսել նրա լծի տակ հեծող ժողովուրդների ազատագրական պայքարի մասին։

Բոլշևիկները լիովին պաշտպանում էին արևմտահայության ազատագրման գաղափարը, բայց նրանք դեմ էին այն ռուսական հեղափոխության դեմ շանթարգել դարձնելուն կամ համենայն դեպս նրան հակադրելուն։ Հենց այդպես էին վարվում հայ նացիոնալիստները, առանձնապես դաշնակցականները, որոնք յուրաքանչյուր հայից պահանջում էին մոռանալ ամեն մի դասակարգային շահ ու տարբերություն և ճանաչել միայն մեկ իդեալ՝ Արևմտյան Հայաստանի «ազատագրում», որը, սակայն, նրանք կապում էին իմպերիալիստների ագրեսիվ գաղութարարական քաղաքականության հետ։ Ստ. Շահումյանը նշել է, որ դաշնակցականների «թուրքահայ ավանտյուրան» հանդիսանում է «հայ ազգային ռեակցիայի ռեզերվը, որն այնքան վնաս հասցրեց Կովկասի հայ բնակչությանը, այնքան վիշտ ու տառապանք պատճառեց թուրքահայերին և այնքան անգնահատելի ծառայություն մատուցեց հայ բուրժուազիային»[7]։ Միանգամայն իրավացի էր նաև Ս. Սպանդարյանը, որը դաշնակցականներին համարում էր «հայ կյանքի ցեցեր», «հայ բանվոր դասակարգի գիտակցությունը բթացնողներ և հայ գյուղացիությանը ամենաանամոթ կերպով հարստահարողներ ու կեղեքիչներ»[8]։

Լենինը ոչ միայն մերկացնում էր Հայաստանի նկատմամբ կիրառվող դավթողական քաղաքականությունը, այլև տալիս հայկական հարցի լուծման դրական ծրագիր՝ «անկախ հայկական հանրապետության» ստեղծում։ Նա դեռ Հոկտեմբերի նախօրյակին գրում էր, որ ապագա դեմոկրատական «հաշտության գլխավոր պայմանն է հրաժարում անեքսիաներից (զավթումներից), ոչ այն սխալ իմաստով, որ բոլոր պետությունները վերադարձնում են իրենց կորցրածը, այլ այն միակ ճիշտ իմաստով, որ յուրաքանչյուր ժողովուրդ, առանց որևէ բացառության թե՛ Եվրոպայում, թե՛ գաղութներում ազատություն և հնարավորություն է ստանում ինքն որոշելու՝ արդյոք ուզո՞ւմ է առանձին պետություն կազմել, թե՞ մտնում է իր ուզած որևէ այլ պետության կազմի մեջ»[9]։

Լենինյան այս խորիմաստ գրույթն ունի ելակետային նշանակություն։ Դեմոկրատական ու արդարացի հաշտությունը ոչ թե նախապատերազմյան վիճակի (այսինքն՝ դարձյալ իմպերիալիստական թալանի) վերականգնում է

6 Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վ. 95, թ. 24։
7 Ստ. Շահումյան, երկեր, հատ. 2, էջ 290։
8 Ս. Սպանդարյան, երկեր, հատ. 1, էջ 68։
9 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 26, էջ 57։

(հետևապես, ոչ էլ Արևմտյան Հայաստանի թողնելը Թուրքիայի տիրապետության տակ), այլ ազգերի ինքնորոշման իրավունքի ապահովումը։ Այդ անհրաժեշտ էր իրականացնել բոլորի նկատմամբ, այդ թվում նաև «ամբողջ Հայաստանի նկատմամբ»[10],— շեշտում էր Վ. Ի. Լենինը։

Այսպիսով, կոմունիստական կուսակցությունը Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին, այդ թվում հայ աշխատավորությանը, առաջնորդում էր ազատագրության միակ ճիշտ ուղիով։ Դա խորապես արդարացի ու դեմոկրատական ուղի էր, սոցիալիստական հեղափոխության հաղթանակի ուղին։

* * *

Հոկտեմբերյան հեղափոխությունը մեր երկրի բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև հայ ժողովրդին, տվեց սոցիալական ազատություն ու ազգային վերածնունդ։ Արմատականորեն լուծվեց ազգային հարցը և սովետական իրավահավասար ու բարեկամ ժողովուրդները կանգնեցին քաղաքական, տնտեսական ու կուլտուրական զարգացման լայն ուղու վրա։

Սովետական իշխանության ծնունդը նշանավորվեց ոչ միայն խաղաղության ու Հողի մասին դեկրետներով, այլև Ռուսաստանում բնակվող բոլոր ազգերին ինքնորոշման իրավունք տալով։ Դրա պերճախոս վկայությունն է «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որն ընդունվեց 1917 թ. նոյեմբերի 2 (15)-ին։ Այն ամբողջությամբ տարածվում էր նաև հայ ժողովրդի վրա, բայց, դժբախտաբար, սովետական իշխանության բարիքներից Անդրկովկասի ժողովուրդները լրիվ օգտվեցին մի քիչ ավելի ուշ։ Դա բացատրվում է նրանով, որ այստեղ միաժամանակ ձգձգվեց սոցիալիստական հեղափոխության հաղթանակը։

Մեծ Հոկտեմբերից հետո Անդրկովկասում իշխանությունը ժամանակավորապես անցավ բուրժուական ու մանրբուրժուական կուսակցություններից կազմված հակասովետական բլոկի ձեռքը, ապա այն տրոհվեց օտարերկրյա իմպերիալիստներից կախված մենշևիկյան Վրաստանի, մուսավաթական Ադրբեջանի ու դաշնակցական Հայաստանի, որոնց կառավարողների ռեակցիոն, նացիոնալիստական ու ավանտյուրիստական քաղաքականությունը երկրամասի ժողովուրդներին կանգնեցրեց ահավոր աղետի առաջ։

Այդ ծանր պահին Սովետական Ռուսաստանը պարզեց իր փրկարար ձեռքը և պատրաստակամություն հայտնեց՝ օգնելու Անդրկովկասի ժողովուրդների ազատագրմանը ներքին ու արտաքին թշնամիներից։ 1917 թ. դեկտեմբերի 16-ին ականավոր լենինյան Ստ. Շահումյանը նշանակվեց Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար։ Նա, անմիջականորեն գլխավորելով երկրամասում սովետական իշխանություն հաստատելու համար մղվող պայքարը, բանվորներին, գինվորներին ու գյուղացիներին ուղղած կոչում ասում էր. «Կովկասը կանգնած է անդունդի եզրին։ Փրկեցե՛ք նրան։ Ստեղծեք այստեղ ինտերնացիոնալ բանվորա-գյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների ու ժողովրդական կոմիսարների սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով՝ վերջ կդնի Կովկասի հակահեղափոխու-

10 Նույն տեղում, էջ 58։

թյանը և երկրի բանվոր ու գյուղացի բնակչությանը կառաջնորդի դեպի լուսավոր ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությունը»[11]։

Կոմունիստական կուսակցությունը մեծագույն հոգատարությամբ էր լցված դեպի Անդրկովկասի ժողովուրդները, այդ թվում հայ ժողովուրդն ու նրա արևմտյան հատվածը։ Բնորոշ է, որ հեղափոխությունից հետո անմիջապես սովետական պետական ապարատում ստեղծվեց Հայկական գործերի կոմիսարիատ՝ ականավոր լենինյան Վառլամ Ավանեսովի գլխավորությամբ, իսկ նրա տեղակալ նշանակվեց բոլշևիկ-բանաստեղծ Վահան Տերյանը։ Կազմակերպվեց վիթխարի օգնություն սոված ու անօթևան հայ գաղթականությանը, իսկ 1917 թ. դեկտեմբերի 29-ին Ժողկոմսովետը՝ Վ. Ի. Լենինի նախագահությամբ ընդունեց «Թուրքահայաստանի» մասին» հռչակավոր դեկրետը, որը սովետական կառավարության առաջին օրենսդրական ակտերից մեկն էր և ամբողջովին պաշտպանում էր հայ ժողովրդի շահերը, առանց վնաս հասցնելու որևէ այլ ժողովրդի։ Ժողկոմսովետի այս դեկրետը լենինյան ազգային քաղաքականության փայլուն դրսևորումն էր. այն, ինչի մասին ասում էին բոլշևիկները մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, այժմ բարձրացվեց պաշտոնական կառավարական քաղաքականության աստիճանի։ Հայկական հարցի լուծումը դուրս էր բերվում իմպերիալիստական դիվանագիտության ճանկերից և դրվում ռեալ ու արդարացի ուղու վրա։ Աղդարարվեց Արևմտյան Հայաստանի անկախություն, հռչակվեց տարաբախտ ու ցրված հայերի հայրենադարձության կազմակերպման անհրաժեշտություն, առաջադրվեցին արևմտահայության ազատ ինքնորոշման երաշխիքներ։ Սովետական պետությունն այն ժամանակ մեծ ջանքեր գործադրեց այդ դեկրետը կենսագործելու, բայց հանդիպեց միջազգային իմպերիալիզմի ու անդրկովկասյան հակահեղափոխության դիմադրությանը։ Հատկապես կործանարար դեր կատարեցին թուրքերը, որոնք 1918 թ. փետրվարին, «որպես առիթ օգտագործելով իրենց իսկ հրահրած կոնֆլիկտը՝ հայկական ջոկատների և մուսուլմանական բնակչության միջև, իրենց զորքերը մտցրին «Թուրքահայաստանի» տերիտորիան և հայ բնակչությանը զրկեցին հնարավորությունից իրականացնելու Ժողկոմսովետի դեկրետով նախատեսված ազատ ինքնորոշման իրավունքը»[12]։ Ստեղծվեց խիստ ծանր կացություն, որը մահացու վտանգ էր սպառնում Անդրկովկասի ժողովուրդներին ընդհանրապես և հայ ժողովրդին՝ մասնավորապես։ Երկրամասի հակահեղափոխական բլոկի ամենամեծ հանցագործությունն այն էր, որ նա Անդրկովկասը կտրեց Սովետական Ռուսաստանից։ Թուրքական, գերմանական, անգլիական, ամերիկյան և այլ նվաճողներ ներխուժեցին Անդրկովկաս։ Երկրամասի ժողովուրդների համար ստեղծվեց կատարյալ մղձավանջ, իսկ դաշնակցական Հայաստանը 1918—1920 թթ. վերածվեց օտարերկրյա իմպերիալիստների գաղութի, ավերակների ու մահվան երկրի։ Դաշնակցական գործիչները, լիովին դավաճանելով հայ ժողովրդի ազգային շահերին ու լցված հակասովետական թույնով, մերժեցին Ռուսաստանի օգնությունը։ Տիրահռչակ «Հառաջ» թերթը գրեց. «Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել և ապահովել իր պետական ու ֆիզիկական գոյությունը հարատևորեն, նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա»[13]։

---

11 Ս տ. Շ ա հ ու մ յ ա ն, Երկեր, հատ. 3, էջ 69—70։

12 «Документы внешней политики СССР», т. I, М., 1957, էջ 712։

13 «Հառաջ», 20 նոյեմբերի, 1920։

Հայ բանվորն ու գյուղացին չէին կարող հաշտվել դաշնակցության ու նրա օտարերկրյա տերերի արյունոտ լծի հետ։ Նրանք դիմեցին հեղափոխական ելույթների, մայիսյան հերոսական ապստամբության, իսկ 1920 թ. նոյեմբերի 29-ին հաստատեցին սովետական կարգեր։ Դա կատարվեց կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ և ռուս մեծ ժողովրդի օգնությամբ։ Սկսվեց հայ ժողովրդի ազատ ու երջանիկ կյանքի լուսապայծառ դարագլուխը։

Այսպիսով, սովետական իշխանությունը բախտորոշ ու փրկարար նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար։ Նա ազատվեց լիակատար բնաջնջման վտանգից և ապահովեց իր գոյության իրավունքը։ Հայ ժողովրդի մեծ բարեկամ Գ. Օրջոնիկիձեն ասել է. «Պատմության մեջ քիչ կան այնպիսի ժողովուրդներ, որոնք տված լինեին այնքան շատ զոհեր, ինչպես հայերը, և քիչ այնպիսի երկրներ, որտեղ թափված լիներ այնքան արյուն, որքան Հայաստանում»[14]։

Սովետական իշխանության հաստատմամբ այդ ծանր «ժառանգությունը» մեկընդմիշտ դառնում էր անցյալի սեփականությունը, որպեսզի այլևս չկրկնվի։ Ճիշտ էր ասում մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանը, որ «եթե հեղափոխությունը չգար, հայ ժողովուրդն իր հայրենիքի մեջ պիտի հալվեր, ոչնչանար, արհամարհելի փոքրամասնություն պիտի դառնար»[15]։ Այդ սպանիչ պրոցեսը կասեցվեց Հոկտեմբերի հաղթանակով։

Արդյոք դրանով սահմանափակվո՞ւմ է սովետական իշխանության նշանակությունը հայ ժողովրդի համար։ Իհարկե ոչ։ Նոր կարգերում նա ձեռք բերեց իսկական ազատություն, խաղաղություն, ապրեց ազգային վերածնունդ, հաստատեց ինքնուրույն պետականություն և դարձավ սովետական ժողովուրդների միասնական ու անխախտ ընտանիքի իրավահավասար անդամը։ Պատմության մեջ առաջին անգամ հայ բանվորներն ու գյուղացիները բարձրացան երկրի կառավարողների աստիճանին և կերտեցին նոր կյանք։ Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ երբեմնի հետամնաց ու տրորված Հայաստանը կարճ ժամանակամիջոցում դարձավ բարձր զարգացած տնտեսության ու առաջավոր մշակույթի ծաղկուն երկիր, որը սովետական ժողովուրդների հետ միասին հաստատակամորեն գնում է դեպի լուսավոր ապագան։ Այժմ հայ ժողովուրդը անդուլ պայքար է ծավալել ՍՄԿԿ XXV համագումարի որոշումների, տասներորդ հնգամյակի առաջադրանքների կատարման համար։

Ամերիկյան ականավոր նկարիչ Ռոքուել Քենտը 1962 թ. օգոստոսին եղավ Հայաստանում և իր տպավորությունների մասին ասաց. «Եթե ինձ հարցնեին, թե մեր մոլորակի վրա որտե՞ղ կարելի է առավել շատ հրաշքների հանդիպել, ես առաջինը կտայի Հայաստանի անունը։ Ժողովրդական տնտեսության, գիտության, կուլտուրայի, արվեստի բնագավառում ձեր հանրապետության վերափոխումները, իրոք, հրաշքի են նման։ Ակամայից զարմանում ես, որ աշխարհի այսպիսի մի փոքրիկ անկյունում կարելի է հանդիպել այնպիսի կոթողների ու այնպիսի մարդկանց, որոնք կարող են կազմել աշխարհի զարդն ու պարծանքը... Երիցս կեցցե՛ս դու, հող հայկական, օրրան տաղանդների, օրրան մեծագործությունների»։

---

[14] Г. К. Орджоникидзе. Статьи и речи, т. I, М., 1956, էջ 412։

[15] «Հայրենիքի ձայն», 18 հոկտեմբերի, 1967։

Համեմատաբար փոքրաթիվ հայ ժողովուրդը, որը դարեր շարունակ հալածվել է ու ջարդվել բաղմապիսի բռնակալների ու զավթիչների կողմից, այժմ դարձել է մեծ ու անպարտելի։ Դա բացատրվում է նրանով, որ հայ ժողովուրդը գտնվում է Սովետական Միությունում, սոցիալիզմի համաշխարհային սիստեմում։

Ահա հայ ժողովրդի ազատագրման հոկտեմբերյան ուղու արդասավոր պտուղները։ Վերհիշելով մեր ժողովրդի զարհուրելի անցյալը, ավելի հստակորեն ենք տեսնում նրա սոցիալիստական վերածնության վեհությունը։

Պատմական այդ մեծագույն դասը խորապես ուսանելի է նաև սփյուռքահայության համար։ Իրավամբ, Սովետական Հայաստանը դարձել է նրա մայր հայրենիքը, հայ ժողովրդի ազգային համախմբման հաստատուն կենտրոնը։ Աշխարհով մեկ ցրված աշխատավոր հայերի քարավանները մշտապես հանգրվանում են այստեղ և սովետական ջերմ արևի տակ ակտիվորեն մասնակցում նոր կյանքի կառուցմանը։ Սովետական Հայաստանի գոյությունն ու ծաղկումը ոչ միայն նրան դարձրել է ձգողության կենտրոն սփյուռքահայության համար, այլև կասեցնում է «սպիտակ ջարդը», այսինքն՝ նրա ձուլումը կապիտալի աշխարհում։

Այսպիսով, սովետական իշխանությունը ազատարար ու ոգեշնչող նշանակություն ունի ամբողջ առաջադեմ հայության համար։ Կյանքը լիովին հաստատեց այն մեծագույն ճշմարտությունը, որ հայ ժողովրդի փրկության ու բարգավաճման միակ ուղին Հոկտեմբերի ուղին է, բոլոր ժողովուրդների ազատության ու երջանկության մայրուղին։